Էլմ. 381
1. Ինչո՞ւ կմերժես դու հրավերը
Խաչյալ Փրկչի, որ կըսե՝ եկուր,
Կլվա քեզ քո պիղծ մեղքերեն
Եվ կընե քեզ ձյունեն ալ մաքուր:

Ե՛կ, մեղավոր, ե՛կ, շուտ ըրե,
Բաց բազուկներուն մեջ քեզ
նետե:

2. Տե՛ս, ինչպես գամված Նա
խաչին վրա,
Անտրտունջ քեզ համար կզոհվի,
Տե՛ս, ինչպես վշտահար Նա
կուլա
Ու ջերմ սիրով քեզի կնայե:

3. Ե՛կ, շուտով խաչին տակ
ծնրադրե
Ու մեղքերդ Անոր խոստովանե,
Ե՛կ այսօր աշխարհեն հրաժարե
Եվ ամբողջ կյանքդ Անոր նվիրե:

4. Եթե հիմա հրավերն դու
մերժես,
Անոր Սուրբ Հոգին կվշտացնես,
Եվ գուցե այս վերջին անգամն է,
Որ Նա քո սրտի դուռն կզարնե: